ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

«------»-------2010թ. N

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 214.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթները, Երևան քաղաքի ավագանու 2009թ դեկտեմբերի 23-ի h55-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետը, հաշվի առնելով Կինոյի զարգացման <<Ոսկե ծիրան>> հասարակական կազմակերպության 18.11.2010թ. h.23857 գրությունը.

Երևան քաղաքի ավագանին ***որոշում է.***

Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն համարվող Մոսկովյան փողոց թիվ 3 հասցեի շենքի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.09.2005թ h.1626147 վկայական) առաջին հարկի 214.9քմ մակերեսով տարածքը (այսուհետ՝ գույք) անհատույց օգտագործման իրավունքով հինգ տարի ժամկետով տրամադրել Կինոյի զարգացման <<Ոսկե ծիրան>> հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 214.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ

Երևանի քաղաքապետարան է դիմել <<Կինոյի զարգացման <<Ոսկե ծիրան>> հասարակական կազմակերպությունը Երևան համայնքի սեփականություն համարվող Մոսկովյան փողոց թիվ 3 հասցեի շենքի (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 06.09.2005թ հ.1626147 վկայական) առաջին հարկի 214.9քմ մակերեսով ոչ բնակելի տարածքը անհատույց օգտագործման իրավունքով իրեն տրամադրելու խնդրանքով:

Երևանի Մոսկովյան 3 հասցեի շենքի Երևան համայնքի անվամբ համայնքային սեփականության իրավունքը գրանցվել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 9-ի <<Երևան քաղաքին սեփականության իրավունքով փոխանցվող անհրաժեշտ գույքի ցանկը սահմանելու մասին>> հ.604-Ն որոշման հիման վրա:

Հաշվի առնելով Կինոյի զարգացման <<Ոսկե ծիրան>> հասարակական կազմակերպության ներդրումը Հանրապետության մշակութային կյանքում, հայ կինոյի զարգացման բնագավառում ծրագրերի իրականացմանն ուղղված միջոցառումների կազմակերպման կարևորագույն խնդիրների լուծման անհրաժեշտությամբ պայմանավորված առաջարկվում է Երևանի Մոսկովյան 3 հասցեի շենքի 1-ին հարկի 214.9քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման իրավունքով հինգ տարի ժամկետով տրամադրել Կինոյի զարգացման <<Ոսկե ծիրան>> հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 214.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի Մոսկովյան փողոց թիվ 3 հասցեի շենքի առաջին հարկի 214.9քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ այլ որոշումների ընդունման կամ այլ որոշումներում լրացումներ և (կամ) փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3 ՀԱՍՑԵԻ ՇԵՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐԿԻ 214.9ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի Մոսկովյան փողոց թիվ 3 հասցեի շենքի առաջին հարկի 214.9քմ մակերեսով տարածքը անհատույց օգտագործման տրամադրելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ